ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **15/03/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Բացակա էին՝ Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը, Արմեն Հակոբջանյանը, Արմենակ Միրզախանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝
Աննա Կարապետյանը, Երվանդ Եղիազարյանը, Գոհար Սրապյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Վեյնամին Թանգյանը, Արմեն Խաչատրյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Կարեն Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Նախքան օրակարգի հաստատելը համայնքի ղեկավարի առաջին տեղակալը զեկուցեց, որ «Սյունյաց Երկիր» թերթի խմբագիր Հ. Ալեքսանյանը դիմում է ներկայացրել 2024թ. ապրիլի 14-ին Հ. Սահյանի ծննդյան 110-ամյակի առիթով թերթի հատուկ համարի հրատարակման համար գումարի աջակցության խնդրանքով և անհրաժեշտ է բյուջեում կատարվող փոփոխության մեջ ներառել նաև այդ գումարը: Ավելացրեց նաև, որ այսօր տեղի է ունեցել հանրային լսում սուբվենցիոն 2 ծրագրային հայտերի վերաբերյալ և անհրաժեշտ է օրակարգ ներառել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2024 թվականին բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտեր ներկայացնելուն համաձայնություն տալու մասին» հարցը:
Դրվեց քվեարկության
Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հարցը ներառվեց օրակարգ:

Հ. Հակոբյանը օրակարգի 2-րդ հարցի հետ կապված, որը վերաբերվում է հնգամյա զարգացման ծրագրին, հարցրեց ինչ ընթացակարգով որ ընդունել ենք, արդյո՞ք նույն ընթացակարգով է տեղի ունենում փոփոխությունները, քանի որ խորհրդի որոշումը և հանրային լսման արձանագրությունը ներառված չէ:

Կ. Հովհաննիսյանը պատասխանեց, որ այսօր է տեղի ունեցել հանրային լսում և տվյալ փաստաթղթերը կտրամադրեն:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2024 թվականի մարտի 15-ի հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 99-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 50-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 102-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   4) Տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին.
   5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 14-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
   7) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին.
   8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար և Շաքի բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին.
   9) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Տոլորս բնակավայրի 3-րդ փողոց 13/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
   10) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի Իսրայել-Օրի փողոց 12/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
   11) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Ե. Չարենց փողոց 31/2 հասցեի հողամասը կառուցապատման իրավունքով մրցույթով տրամադրելու մասին.
   12) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Մանուկյան փողոց 3/3 հասցեի հողամասը կառուցապատման իրավունքով մրցույթով տրամադրելու մասին.
   13) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 80-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   14) Սիսիան համայնքում 2024 թվականի գարնանը ծառերի հատում ու էտ իրականացնելու մասին.
   15) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.

16) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2024 թվականին բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտեր ներկայացնելուն համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 028-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 99-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 99-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2395008.9 հազար դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 2633563.4 հազար դրամ» բառերով:
   2) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 3274301.4 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 3512855.9 հազար դրամ» բառերով:
   3) Որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 1-ի:
   4) Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 2-ի:
   5) Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դ. Այվազյանը մանրամասն ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխությունները: Որոշման նախագծի ընդունումից հետո բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանա 238554405.05 (երկու հարյուր երեսունութ միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր հինգ ամբողջ հինգ հարյուրերորդական) ՀՀ դրամով:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 029-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 82-րդ հոդվածի 8-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայատանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 50-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ ու որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը ներկայացրեց, որ փոփոխությունները կատարվել են դոտացիայի թիվը պարզ լինելու արդյունքում և որոշ ծրագրերի ժամանակահատվածներ են փոխվել:

Հարց ու պատասխանից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-16 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 030-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 102-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 82.1-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայատանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ ու որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 031-Ա/

Լսեցին

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 1169-Ն որոշումը և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Սիսիան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների տեղական վճարի (վարձավճար, ծնողական վճար) նկատմամբ սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափ, հետևյալ երեխաների համար՝

1) 2022 թվականի սեպտեմբերի 1-ից կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող.
2) 2023 թվականի սեպտեմբերի 1-ից՝ զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի:

2. Սույն որոշումը հետադարձ ուժով գործում է իրավահարաբերությունների ծագման պահից՝ 1-ին կետի 1-ին ենթակետի դեպքում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից, 2-րդ ենթակետի դեպքում՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ն. Յազուլյանի հարցին, թե օրվա մեջ քանի՞ անգամ են երեխաները սնվում և քնից արթնանալուց հետո ետճաշիկը արդյո՞ք բավարար է երեխային սնվելու համար: Ն. Հովհաննիսյանը պատասխանեց. 3 անգամ՝ նախաճաշ, ճաշ, ետճաշիկ: Առաջնորդվում ենք սահմանված կարգին համապատասխան:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 032-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 14-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ. Իվանյանը զեկուցեց, որ նկատի ունենալով բնակավայրերի մեծությունը և կատարվող աշխատանքների ծավալը նախատեսվել է Շաքի, Գորայք, Անգեղակոթ բնակավայրերում ավելացնել բանվորի հաստիք:

Ջ. Մարգարյանը հարցրեց, թե ինչքա՞ն է աշխատավարձի չափը և ի՞նչ պարտականություն պետք է կատարեն և ունե՞ն պաշտոնի անձնագիր:

Կ. Իվանյանը պատասխանեց, որ աշխատավարձի չափը 104000 ՀՀ դրամ է, պաշտոնի անձնագիր չունեն և վարչական ղեկավարներն են նման աշխատանքները կատարում, որոշել ենք կարևորություն տանք վարչական ղեկավարի աշխատանքին:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 033-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 16-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) որոշման թիվ 6 հավելվածի 39-րդ տողի «Հաստիքային միավորը» սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով, «104000» թիվը փոխարինել «208000» թվով,
   2) որոշման թիվ 7 հավելվածի 22-րդ տողի «Հաստիքային միավորի քանակը» սյունակի «2» թիվը փոխարինել «3» թվով, «208000» թիվը փոխարինել «312000» թվով,
   3) որոշման թիվ 8 հավելվածի 36-րդ տողի «Հաստիքային միավորը» սյունակի «4» թիվը փոխարինել «6» թվով, «416000» թիվը փոխարինել «624000» թվով,
   4) որոշման թիվ 9 հավելվածի 17-րդ տողի «Հաստիքային միավորի քանակը» սյունակի «2» թիվը փոխարինել «3» թվով, «208000» թիվը փոխարինել «312000» թվով,
   5) որոշման թիվ 10 հավելվածի 8-րդ տողի «Հաստիքային միավորը» սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով, «104000» թիվը փոխարինել «208000» թվով:
   2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ. Իվանյանը զեկուցեց, որ փոփոխությունը վերաբերվում է ենթակա կազմակերպությունների հաստիքացուցակներին և ավելացրել ենք պահակների հաստիքը, քանի որ ըստ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի աշխատաժամանակի միջին տևողությունը շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից, իսկ աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող պակաս լինել 24 ժամից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 034-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Թանգյանը զեկուցեց, որ անհրաժեշտ է համայնքի խոշորացուից հետո հաստատել նոր քաղաքաշինության կանոնադրություն, որը փոփոխության կենթարկվի համայնքի քարտեզը ունենալուց հետո, քանի որ այն մշակման փուլում է: Մեր կողմից բավականին առաջարկություններ է եղել, որոնք քարտեզում դեռ ներառված չէ, նպատակահարմար ենք գտնում մասնագետները այցելեն և տեղում մեր առաջարկությունները ներկայացնենք և ներառենք կանոնադրության մեջ:
Ավագանու անդամ Հ. Հակոբյանը հեռացավ դահլիճից:
Հարցը դրվեց քվերակության:

Կողմ-15 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 035-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՇԽԱՆԱՍԱՐ ԵՎ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար և Շաքի բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր և այլ հողատեսքեր գործառնական նշանակության
   1) 09-060-0110-0001-ից 0,02039 հա
   2) 09-060-0114-0001-ից 0,00124հա
   3) 09-060-0115-0017-ից 0,02039հա
   4) 09-060-0113-0001-ից 0,00940հա
   5) 09-070-0132-0001-ից 0,00710հա
   6) 09-070-0119-0001-ից 0,02039հա
   7) 09-070-0125-0001-ից 0,02039հա
   8) 09-070-0125-0001-ից 0,02039հա
   9) 09-070-0125-0001-ից 0,00533հա

   հողամասերը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի գործառնական նշանակության հողամասի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 036-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈԼՈՐՍ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 13/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48[1]-րդ, 57-րդ, 60-րդ, 76-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման պահանջները և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող, Տոլորս բնակավայրի 3-րդ փողոց 13/1 հասցեում գտնվող 0,002 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «ընդհանուր օգտագործման հողեր» գործառնական նշանակության հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 09-102-0547-/ առանց մրցույթի, 20 /քսան/ տարի ժամկետով, 1քմ 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ տարեկան վճարով օգտագործման տրամադրել կառուցապատման իրավունքով, ոչ հիմնական շինություն՝ տաղավար տեղադրելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը ներկայացրեց, որ մինչև 20քմ հողատարածքները համայնքի ղեկավարի որոշումով իրավունք ունենք տրամադրելու, սակայն համայնքի ավագանին պետք է որոշի վարձավճարի գինը:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 037-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԻՍՐԱՅԵԼ-ՕՐԻ ՓՈՂՈՑ 12/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48[1]-րդ, 57-րդ, 60-րդ, 76-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 46.2 կետի «բ» ենթակետի պահանջները և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող, Սիսիան քաղաքի Իսրայել-Օրի փողոց 12/1 հասցեում գտնվող 0,002 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասը /վկ. 19032024-09-0019, կադաստրային ծածկագիր՝ 09-006-0252-0024/ առանց մրցույթի, 20 /քսան/ տարի ժամկետով, 1քմ 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ տարեկան վճարով օգտագործման տրամադրել կառուցապատման իրավունքով՝ ոչ հիմնական շինություն կառուցելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 038-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ք.ՍԻՍԻԱՆ Ե.ՉԱՐԵՆՑ ՓՈՂՈՑ 31/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. 2024թ. առաջին կիսամյակում բաց մրցույթով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ մեկնարկային գնով, 25 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված, Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Ե.Չարենց 31/2 հողամաս հասցեում գտնվող 627.2քմ բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասը (վկ. 11032024-09-0005, ծածկ. 09-006-0250-0074)՝ ջրային նավակների կայանատեղի կառուցելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 039-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ 3/3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. 2024թ. առաջին կիսամյակում բաց մրցույթով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը 400 /չորս հարյուր/ ՀՀ դրամ մեկնարկային գնով, 25 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված, Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Ա. Մանուկյան 3/3 հողամաս հասցեում գտնվող 31.5քմ բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասը (վկ. 26012024-09-0005, ծածկ. 09-006-0109--0103)՝ սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 040-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 80-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող արոտներից և գյուղատնտեսական այլ նշանակության հողերից 0.32756հա հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 80-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 1-ին կետի «25 /քսանհինգ/» բառը փոխարինել «10 /տասը/» բառով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը ներկայացրեց, որ տեղի է ունեցել վրիպակ, տվյալ հողամասը պետական սեփականության հող է, որը իրավունք չունեինք տասը տարուց ավել տրամադրեինք, այդ պատճառով անհրաժեշտ է փոփոխություն կատարել:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 041-Ա/

Լսեցին

ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄ ՈՒ ԷՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 42-րդ կետերով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Շրջակա միջավայրի պահպանությունը կազմակերպելու նպատակով 2024 թվականի գարնանը Սիսիան համայնքում իրականացնել համայնքային սեփականություն հանդիսացող ծառերի հատում և էտ (համաձայն հավելվածի) ու առաջացած վառելափայտը տրամադրել համայնքային ենթակայության կազմակերպություններին և համայնքի կարիքավոր ընտանիքներին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ա. Խաչատրյանը զեկուցեց, որ հատման և էտման ենթակա ծառերը փակում են ճանապարհների տեսանելի հատվածը՝ ստեղծելով վթարային իրավիճակ, ինչպես նաև հաշվի ենք առել քաղաքացիների դիմում խնդրանքները:

Ջ. Մարգարյանը տեղեկացրեց, որ համայնքում կան ծառեր, որոնք էլեկտրահաղորդման գծերին խանգարում են:

Հ. Առաքելյանը հարցրեց ե՞րբ է կատարվելու գարնան էտը և աշնան էտի արդյունքները երբ կարող ենք տեսնել, ծառեր կան որ դեռ էտված չեն:

Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ գարնան էտը նախատեսված է գարնան համար, եթե չենք տեղավորվում ժամանակի մեջ, տեղափոխում ենք աշնան էտի ցանկում, չենք թողնում հաջորդ տարվա: Յուրաքանչյուր տարի գարուն, աշուն ներկայացնում ենք ավագանու հաստատման:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 042-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի ապրիլի 19-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 043-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N1708-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջետային ֆինանսավորման ներկայացվող հետևյալ ծրագրային հայտերին՝
   1) Սիսիան համայնքի «Ա. Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի Ֆիզկուլտուրնիկների 2ա հասցեում գտնվող պարի դպրոցի շենքի կապիտալ վերանորոգում.
   2) Սիսիան համայնքի համար բազմաֆունկցիոնալ տրակտորի և ավտոաշտարակի ձեռքբերում:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ե. Եղիազարյանը զեկուցեց, որ շենքը նախագծային փուլում է, նախնական գումարի չափը 60մլն. ՀՀ դրամ է, իսկ տեխնիկան՝ 3 ընկերության գնային հարցումներ են կատարել, ամենաբարձր գինը 70մլն. ՀՀ դրամ է: Նախատեսված է 18մ երկարությամբ ավտոաշտարակ, հաշվի են առել բացի լուսավորության համակարգը սպասարկելուց, նաև բարձր բազմաբնակարան շենքերի տանիքների սպասարկման համար է:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 044-Ա/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱՋՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը